

ԱԶԳԱՅԻՆ

ԿԱԹՈՒՂԻԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ.

Կաթուղիկոսական ընտրութեան տարին դեռ յըլրացրած՝ ահա նոր հանգերձանք, նոր հոգացողութիւն և նոր ջանք՝ նորոգ ընտրութիւն կատարելու:

Անցեալ տարուայ ընտրութիւնը որպէս պատմական անցք՝ կատարուեց. բայց շատ անգամ պատմական անցքերը՝ որչափ և տպաւորիչ, սակայն իրանց յարակից պարագաների պատճառով մնումեն անհետեանք և չեն յառաջացնում այն տրդիւնքը, ինչ որ պէտք էր ակնունել: Ահա այս տեսակ պատմական անցքերի կարգին էր պատկանում անցեալ տարուայ ընտրութիւնը:

Ամսոյս 10-ից սկսած համախմբվումէին Մայր Աթոռս ազգի ներկայացուցիչները ամենայն Հայոց հայրապետի ընտրութիւնը կատարուելու համազգային ժողովով. խոնվումէին ամենայն տեղերից և յատկապէս Ալէքսանդրօպոլից ու Երևանից հետաքրքիր մարդկանց բազմութիւն ակսնատես և ականջալուր լինելու:

Ամենայն տեղ կենդանութիւն և շարժումն է. խօսում և վիճումեն: գովում գովաբանումեն այս ոքին, դատում դատափետում այն ոքին. ամեն մինը կամենումէ իւր ցանկացածի ընտրութիւնը յաջողեցնել. լինումեն առտնին ժողովներ և խորհուրդներ, հետաքրքիր բազմութիւնը ակնդէտ սպասումէ լսել պատգամաւորներից նոցա կարծիքն ու ցանկութիւնը, բայց նոքա խորհրդապահ են:

Ամսոյս 18-ին աշխարհական և հոգևորական պատգամաւորների ներկայութեամբ Վեհարանի դահլիճում եղաւ առաջին ոչ պաշտօնական ժողովը՝ գործերին ծանօթանալու:

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄՔԻՆ

ԱՆԴԱՀԵ ԱՅՆԵԴ

Տեղակալ Առենապետի Սինօդի Մկրտիչ Արքեպիսկոպոս,

Մեսրոպ Եպիսկոպոս Ամբատեան,

Անդահե Յովակիսկոպոս Տէր Գրիգորեան,

Երեմեան Եպիսկոպոս Գալստեան,

Մամբրէ Վարդապետ Անաստարեան.

Պատրիարքություն + Միաբնակութեան Մայլ Անունոյն .

Սերովըէ Եպիսկոպոս Արարատեան

Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեան

Յովհաննէս Եպիսկոպոս Տէր Յարութիւնեան

Գրիգոր Ն. Վարդ. Տէր Ստեփաննոսեան

Արիստակէս Վարդ. Դաւթեան

Ստեփան Վարդ. Մելիք Դաւթեան

Յովակիմ Վարդ. Ղամեքեան .

Վիճակություն + Ռուսաստանեայց .

Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեան կառավարիչ Ղարաբաղու

և կողմանէ Վիճակաւորին Ատրպատականի՝ Մկրտիչ Արքեպիսկոպոս ,

և կողմանէ Վիճակաւորին Պարսկաստանի և Հնդկաստանի՝ Սերովըէ Եպիսկոպոս Արարատեան ,

Թադէոս Եպիսկոպոս Զիւնական կառավարիչ Շամախույ

Սուքիս Եպիսկոպոս Պարզեան կառավարիչ Աստրախանի

Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեանց կառավարիչ Կարուց

Արիստակէս Եպիսկոպոս Սեղրակեան վիճակաւոր Տփխեաց

Գէորգ Եպիսկոպոս Սուրէնեան Փոխ. Թեմակալ Երեւանայ .

և կողմանէ Վիճակաւորին Բեսարարիոյ և Նոր Նախիջևանայ Կարապետ Վարդ. Տ. Գոլստեան .

Աշխարհական պատրիարքություն .

Խօսհակ Մանուկեան Ալաճալեան Նոր Նախիջևանի և Բեսարարիոյ .

Ներսէս Ասլանեան Աթարքեան Ղարաբաղու .

Ալէքսանդր Ղաղաղեան Կարուց .

Սիմէօն Աթանասեան Երեւանայ .

Արգար Յովհաննիսեան Տփխեաց .

Համբարձում Առաքելեան Ատրպատականի .

Յովհաննէս Սարգսեան Աստրախանի

Ամսոյս 19-ին առաւօտեան նախ քան Ա. Պատրարք սկսուելը
հոգեորական և աշխարհական պատգամաւորները ժողովուեցին

Վեհարամնի Դահլիճը յորդարելու հանդիսաւոր գնացքը զէսլ ի եկեղեցի: Սկսեց զանգահարութիւնը և պատգամաւորները զոյգ զոյգ դուբս եկան Վեհարամնից եկեղեցի գալու. գնացքին սուածնորդումէր Ամենապատիւ Տեղակալ Հայրը յաջմէ և յահեկէ ունելով Տէրութեան Ներկայացուցչին և Սինօդի Պրօկուրօրին, սոյա հետեւումէին Սինօդի անդամները, Առաջնորդներն ու Մայր Աթոռոյս Միաբանութեան պատգամաւորները ըստ աւագութեան ձեռնադրութեան, ապա աշխարհական սպատգամաւորները. գնացքը վերջաւորվումէր Սինօդի առենադպրով և նորա օգնականներով:

Հետոգրքիր հանդիսաւես քաղմութիւնը ճանապարհի երկու կողմը բակ էին բոլորել և յուսոյ ակնկալութեամբ զգածուած՝ աչքները սեւեռած ակնապարար գնացքին՝ աղօթումէին և յաջողութիւն ցանկանում սկսած գործին: Գնացքը հասաւ եկեղեցի. եկեղեցական պատգամաւորները գնացին դասերը հրանց աեղը կանգնելու, իսկ աշխարհականք Ս. Խջման աեղի առաջ աջ և ձախ կողմերի սիւների տակ տեղ բռնեցին, եկաւ և երեանի նահանգապետը: Սկսուեց Ս. պատարագը. պաարագիչն էր Մայր Աթոռոյս Աւագ Լուսարար և Սինօդի անդամ Գեր. Տէր Երեմիա Սրբազն եպիսկոպոս:

Հանդիսաւոր Սուբբ պատարագից և թագաւոր կայսեր ու կայսերական տան բարօրութեան համար գոհացողական մաղթանքից յետոյ՝ նորին Սրբազնութիւն պատարագիչ Հայրը խուռն բազմութեան ներկայութեամբ աշխարհական սպատգամաւորներին, երդմնեցրեց հետեւեալ երդմնաթղթով:

* Ե Ր Դ Մ Ն Ա Գ Ի Բ *

«Մեք ի ներքոյ անուանեալքս խոստանամք և երդնումք յանուն ամենակարողին Աստուծոյ, առաջի Սրբոյ Աւետարանի նորա, առայն թէ, ցանկամք և պարտիմք յայսմ՝ առաջիկայ ընտրութեան Մայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց վասն գլխաւոր կառավարութեան Սրբոյ Լուսաւորչեան եկեղեցւոյ Հայոց և Մայրագոյն տեսչութեան եկեղեցականաց նորին, ըստ մաքուր խղճի մտաց և պարտուց մերոց առանց իրիք աչառութեան և սեպհական ակնկալութեանց ի բաց հերքելով ի մէնջ զամենայն մախանս թշնամութեան և կամ զորպիսի և իցէ շաղկապ մեր-

ձաւորութեան և բարեկամութեան, ընտրել ի միջոյ հոգեորականաց հայրենի եկեղեցւոյն մերոյ՝ զայնպիսի անձն, զոր ըստ յատկութեանց հանճարոյ և խղճի մտացն առաւել ընդունակագոյն համարիմք մեք, և յորմէ ակնունիմք, զի ի կատարումն պարտաւորութեանց իւրոց, զորս դնէ ի վերայ նորա այս վեհ աստիճան հոգեոր — հանդիսացուսցէ նա զինքն ջերմեռանդ պաշտօնեայ Աստուծոյ և հոգունակ տնօրէն բարօրութեան և օգտի եկեղեցւոյն Քրիստոսի և հաւատացեալ հայրապետական իշխանութեան նորա ի վերայ բանաւոր հօտին Քրիստոսի: Խսկ եթէ այլ ազգ վարեսցուք, յորժամ իրբեւ անհոգ չօգտէ եկեղեցւոյ և ճշմարիտ որդւոց նորին, յորում կայանայ և սեպհական օգուտն մեր, ենթադրեմք զանձինս մեր մեղադրանաց եղբայրուկցաց մերոց և ի հանդերձելումն պատասխանատութեան առաջի Աստուծոյ և ահեղ գատաստանի նորա: Ի վախճան երդմանցս վասն անաւոր ընտրութեան՝ համբուրեմք զիան և զիաչ Փրկչին մերոյ. ամէն:

Երդմնեցուցի Երեմիա Եպիսկոպոս

Յստ այսմ երդման երդուաք
Արգար Յովհաննիսեանց
Համբարձում Առաքելեանց
Ներսէս Աթաբէկեանց
Յովհաննէս Սարգսեանց
Աղէքսանդր Լալայեանց
Սիմէօն Աթանասեանց
Խսահակ Ալաճալեանց»

Այոքանով վերջացաւ այսօրուայ գործը:

Ծնտրութիւնը տեղի ունեցաւ Մայր Տաճարի մէջ: Սեղանը երկարած էր Սուրբ Խջման Տեղի առաջից մինչեւ աւագ դուռը. Տէրութեան Ներկայացուցի համար սեղան գրուած էր հարաւային որմնասիւնի առաջ, նորա առաջը՝ ատենադպրի և իւր օգնականների սեղանն էր. հիւսիսային որմնասիւնի տակ դրուածէր Պրօկոպօրի սեղանը: Ամսոյս 20-ին առաւօտը պատգամաւորները ի ձայն զանգակաց Վեհարանից եկեղեցի եկան ըստ տրամադրութեան օրինաց՝ ազգիս նշանաւոր Եպիսկոպոսիներից չորս ընտրելիները ընտրելու: Ժողովը դռնփակ էր և ժողովականաց թիւը 30:

Նախքան գործ սկսելը Ամենապատիւ Տեղակալ Սրբազան Հայրը ասաց «Հայր մեր» աղօթքը, և երկու սարկաւագներ քաղեցին «Գգործո ձեռաց մերոց» «Տէր ապաւէն» սաղմոսը. «Ի մէջ տաճարին» «Սուրբ խաչիւս» և պահպանիչ աղօթքներից յետոյ Ամենապատիւ Տեղակալ Հայրը տեղի կալաւ նախագահական բազկաթուի առաջ. պատգամաւորները բոնեցին իրանց տեղերը—հոգեւորականք՝ Սրբազան Նախագահի աջ կողմից, իսկ աշխարհականք՝ ձախ կողմից. մինչ ամենքը յոտին կանգնած էին, Ամենապատիւ Տեղակալ Հայրը ժողովը բացեց հետեւեալ ճառով.

«ՍՐԲԱԶԱՆ ԵՂԲԱՐՔ ԵՒ ԳԵՐԱՄԵՆԱՐ ՊԱՏԳԱՄԱԽՈՐՔ ԱԶԳԻՍ:

Այս խորհրդաւոր և նշանաւոր պահուս ժողովելով Սրբոյ Մայր Տաճարիս մէջ, իւրաքանչիւր ոք մեզանից կըզգայ անշուշտ յանձն իւր ներկայ պատկառելի ակմբիս մեծախորհուրդնպատակն. կզգայ անշուշտ ամէն ոք մեզանից թէ ինչ ծանրակշիռ պարտականութիւն ստանձնած է, զոր լիայոյս հաւատով վստահութիւն դրած է մեր վերայ զմեղ ընտրող միլիօնաւոր հայ ժողովուրդն իւր ևկեղեցականներով հանդերձ։ Մեր ամենասիրելի ազգայնոց այդ կատարեալ հաւասն և վստահութիւնն ի բարին և յօգուտ ազգի և եկեղեցւոյ ի գործ զնելու և մինչեւ վերջն իւրեանց յանձն առեալ նուիրական պարտաւորութեանց հաւատարիմ մնալու համար։ Գերամեծար Պատգամաւորք Ազգիս, համաձայն գարաւոր սովորութեան՝ ի մէջ տաճարիս և առաջի Սրբոյ Տեղանոյս՝ յանուն ահաւորին Աստուծոյ, հրապարակական ուխտիւք և երդմամբ վաւերացուցին զայն, որպէս զի Աստուծով ձեռնարկելի իւրեանց սոյն վսեմ Գործն կատարեն ըստ ամենայնի խղճի մոոք։ Միանգամայն ի բաց մերժելով և մերկանալով զհոգին դատապարտելի կուսակցութեան, զհոգին գահալէժ խորութեան. ընաւ երբէք չնախապաշարիլ որ և իցէ ներքին և արտաքին պատճառներէ, այլ զգենուլ զհոգի հաւատարմութեան, արդարասիրութեան և անաշառութեան, քաջ ի միտ առնելով թէ՝ ոչ յանխորհուրդս ժողովուած եմք մեք այս միակ պարծանաց սրբավայր Տաճարիս մէջ, այլ թէ ժողոված եմք, միայն յանուն հայութեան. ուրեմն և յանուն հայութեան և Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ ընտրելու եմք Պետ և Գլուխ. Ռւսաի ընդ ամենայն ծագս սրչխարհի

ուր ուրեք եթէ կայ և կգտնուի հայ անունով և կրօնիւք գէթ մի ետ և սնչատ, նա անդամ է ազգային մարմնոյ և հարազատ որդի մերս եկեղեցւոյ: Խորութիւն պէտք չէ մեզ գիտել, զի ամենեքնան որդիք եմք միոյ առաքելական եկեղեցւոյ և անդամք միոյ ազգի, իսկ եթէ խորութիւն գնելու համար անհրաժեշտ հարկ կընկատուի՝ բայց միայն բնականարար և բարոյապէս այդ անրոնարարելի ճշմարտութիւնն ճանաչելու եմք և որոնելու այն արդարամիտ իրականութեան և գործողութեան շրջանակին մէջ, զոր ահաւասիկ դրած են գրաւորապէս մեր առաջեւ մեծամասնութիւն Հայոց Տաճկաստանի, որից այժմ շեղին՝ որպէս թուի ինձ, չէ վայելուչ բատ ուղիղ արամադրութեան ազգային դարաւոր անժիսելի պայմանաց: Եւ որպէս զի ապացուցանեմք մեր ազգին, ազգացուցանեմք ընդհանուր լուսաւորեալ աշխարհիս, թէ հայք ևս իւրեանց ազգային գործերն լրջմտութեամք և նրբագննին հեռատեսութեամք գիտեն տնօրինել և զիտակցաբար գործել՝ մանաւանդ թէ տիսուր անցեալէն մի խրատական ազդու դաս ևս առնելով փութամք համերաշխ սիրով միաբանութեան ընարել ի գահակալութիւն և ի յաջորդութիւն մեծի պարթեազնին Որբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորյի և յընդհանրական Կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց այժմեան գտնուածներէն այն արժանաւորագոյն հոգեւորական անձն՝ որն պատկառանք կըտածէ ամենեցուն, և որոյ գործոց և կենաց բարի անցեալն և ներկայն՝ նա մանաւանդ վարդապետական կատարեալ հմտութիւնք և եռանդագին գործունէութիւնքն արդէն անկապտելի յատկութիւնք են դարձել նորա համար: Փութամք ընտրել ի հովուապետութիւն Հայաստանեայց ազգի և եկեղեցւոյ այնպիսի արժանընտիր անձն՝ որ իբրև արթուն հովիւ իւր անքուն հսկողութեամբն գէտ կեցած է միշտ իւր հաւատացեալ հօտին: Այս ցանկալի է տեսանել այդպիսի բարեմասնութեամբ օժտեալ մի անձն՝ անցած ի գլուխ զեկալարութեան ազգի և եկեղեցւոյ: Փութամք ի վերջոյ միանալ ի մի սիրտ և հոգի համերաշխութեան և իբրև որդիք հարազատ երկանց մօրս մեր Սուլք եկեղեցւոյ ի բաց պարուրել նորա լուսափայլ երեսէն այն սգազգեաց տիսրութեան կրկնակի սեւաթոյր քօղն, որով ահաւասիկ երեք ամք են սպատած է նա, կայ և մնայ ի սուգ թախծութեան: Զի յետ մահուան Երջանկայիշատակ Գէորգ Գ. մեծագործ Հայրապետի՝ երբ անցեալ տարի սոյնպիսի պա-

տուամեծար պատգամաւորաց ժողովով ընտրեց ազգն և եկեղեցին ի Հայրապետութիւն ամենայն Հայոց Սրբազն Պատրիարքն Կ. Պօլսոյ Տէր Ներսէս Վեցերորդ, որոյ մէջ արդարեւ տեսնուած էին Աստուածածիր և դրուատելի բարեմասնութիւնք, բայց աւաղ, զի անակընկալ օրհասական մահն զրկեց զմեղ ազգովին վայելելուց նորա Հայրապետական շնորհն։

«Ի կնիք բանիս աղայեցուք ի բոլոր սրտէ զամենակարողն Աստուած, դարձեալ յարուցէ մեր բարձրաստիճան Եղբայրներից նոր մարգարէ, առաջնորդ և հովիւ բարի առաջնորդել, հովուել և խնամել զազգ և զեկեղեցի ճշմարտութեամբ և արդարութեամբ։ Աղայեցուք զառւրբ Հոգին Աստուած, ազգել և ներշնչել ի մեզ հոգի զգաստութեան և զգօնութեան, և ընդ մարգարէին ձայնակցելով առասցուք «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեղ» Լուիցէ Տէր Աստուած աղայանաց մերոց։ Ամէն։—»

•Տեղակալ Ատենապետի Սինօդի Սրբոյ Էջմիածնի
ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ,

«Ի 20 Ապրելի 1885 ամի

ի. Ս. Էջմիածին»

Ապա իւրաքանչիւր ժողովական նստեց իրան յատկացեալ աթոռ և սկսուեց այն աւուր սահմանեալ գործը։

Ի միջի հարկաւոր թղթոց կարգացուեց կոստանդնօպոլսոյ աղքային ժողովոյ հետեւեալ թուղթն առ Ամենապատիւ Տեղակալ Հայրը, որով նորին Սրբազնութիւնը իրաւունք էր ստանում Տաճկահայոց պատուիրակ և ներկայացուցիչ լինել։ Եւ ահա.

Ամենապատիւ Տ. Մկրտիչ Ա. Արքեպիսկոպոս Արժանընտիր Տեղակալ կաթուղիկոսութեան ամենայն Հայոց Արարատեան Մայր Աթոռոյ Կաթուղիկէ Արբոյ Էջմիածնի»

Աղդային Երեսփոխանական ժողովն Հայոց Թուրքիոյ գումարեցաւ յառաջնումն աւուր Մարտ ամսոյս ի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոջ Վալաթիոյ վասն մասնակցութեան յընտրութիւն կաթուղիկոսի ամենայն Հայոց ըստ տրամադրութեան Ազգ. Սահմանադրութեան. ժողովն յետ խորհրդակցութեանց և քննու-

թեան պարագայից իրացն՝ որոշեաց յայս նուագ և օ կատարել զմանակցութիւն Հայոց Տաճկաստանի, բատ եղանակին բացտրելոյ ի տեղեկագրին որ ի 16 Ապրիլի 1884 ամի ստորագրեալ յերջանկայիշատակ Պատրիարքէն Ներսիսէ և ուղղեալ առ Ամեն-Տեղական Կաթուղիկոսի ամենայն Հայոց, առ Գեր. Խորհրդական անդամն Ս. Մինօդին և առ Համազգային Ընտրողական Ժողովն, զորոյ պատճէնն կցեմք ընդ սմին:

Ժողովն ի նկատի առեալ զի ատենական գործողութիւնք, որք կատարեցան յանցելումն ամի վասն կազմութեան ցանկի ընտրելեաց, ունին և պահեն զհանգամանս օրինաւորութեան և վասն այժմու ընտրութեան, բայց միայն զի թերացեալ գտանէր եռանուն ցանկն ողբալի վախճանմամբ ազգասէր Հայրապետին Ներսիսի արժան դատեցաւ յաւելուլ ի նմա զանուն յաջորդին՝ որոյ ստացեալ էր յետ երից ընտրելեացն զառաւելագոյն թիւ ի քուէ-արկութեան ազգային Ժողովոյ:

Ըստ այսմ ահա փութամք առաջի առնել Համազգային Ընտրողական պատկառելի Ժողովոյ Մայր Աթոռուոյդ զյանկ երից ընտրելեաց Հայոց Տաճկաստանի հանգերձ թուով քուէիցն որք են

Ա. Ամենապատիւ Տ. Մկրտիչ Ա. Արքեպիսկոպոս Խրիմեան նախկին Պատրիարք Կ. Պօլսոյ, քուէ 50.

Բ. Գեր. Տ. Մելքիսեդէկ Ա. Արքեպիսկոպոս Մուրատեան առաջնորդ Զմիւռնիոյ վիճակին, քուէ 42

Գ. Գեր, Տ. Խորէն Ա. Եպիսկոպոս Աշքեան Հայր Վանուցն Արմաշու, քուէ 18

Արդ՝ փութամք թղթովս այսուիկ յանձն առնել Բարձր Արքազնութեան Զերում զպաշտօն Պատուիրակութեան Հայոց Թուրքիոյ, խնդրելով զի հաճեսջիք ընթեռնուլ զայս պաշտօնական թուղթ մեր յատենի համազգական ընտրողական պատկառելի Ժողովոյն, Ներկայացուցանել նմա զայսուիկ զերիս Ընտրելիս յանուն համօրէն վիճակացն Հայոց որ ընդ հովանեաւ Օսմ. պետութեան և, բատ եղանակի նշանակելոյ ի տեղեկագրին անցելոյ ամի, բարդել ի քուեայսն մեր զգումար քուէից պատկառելի Ժողովոյդ, որպէս զի Եպիսկոպոսն՝ որ ստացի զառաւելագոյն թիւ ձայնիցն, հռչակեսցի կաթուղիկոս ամենայն Հայոց ըստ նախնաւանդ ծիսից և օրինաց Հայաստանեայց Ա. Եկեղեցւոյ:

Ամենապատիւ Ս. Հայր, հաղորդեալ զայսոսիկ որոշմունս Ազգ-ընդհ. ժողովոյ, քաջայոյս եմք զի հանրածանօթ իմաստութեամբ և շրջահայեաց հեռատեսութեամբ ձերով և Գերապատիւ Սինօդականաց և Մեծ. Ատենակալ պատգամաւորաց ընտրողական բարձր ժողովոյն, ունիմք ի յանդ հանել յօդուտ և ի շինութիւն Հայուստանեայց Ս. Եկեղեցւոյ զընտրութիւն արժանաւորագոյն Գահակալի յԱթոռ որբազան Առաքելոցն մերոց, Թագէի և Բարդուղիմեայ և Առաքելասարաս Հօրն մերոյ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:

Ակն ունելով ի շնորհաց ամենազօր Հոգւոյն Սրբոյ յաջող ելլից
ընտրութեանս ի պահպանութիւն անբաժանելի միութեան հա-
մազգական Կաթոլիկէ Եկեղեցւոյ մերոյ սրբոյ, մեծաւ փափա-
քանօք սպասեմք աւետաւոր տեղեկագրի ձերում և մնամք.

Ամենապատռութեան Զերում

Ազօթաբար ի Տէր

Նախագահ Ազգային Երեսփոխանական ժողովոյ

Պատրիարքական Տեղապահ

ԳԵՐԱԴԱՎՈՅԱՆ Ա. ՎԱՐԴԱՊԵՏ ՐՈՒՍՃԱԿԱՔՆԵԱՆ

Ե գիմաց Ազգային Երեսփոխանական Ժողովոյ

Առենադպիր

ՅԱԿՈԲ Ս. ՊՈՇՆԱԿԵԱՆ

ՏԻԴՐԱՆ ԵՌԵՍՈՒԹՅԵԱՆ

Երբ պէտք եր ի լուր ժողովականաց կարդային նշանաւոր եպիս-
կոսպոսների անունները՝ ժողովը որոշեց Կ. Պօլսոյ պատրիարքարանի
եռանուն ցանկը ընդունել անփոփոխ, և չորրորդ ընտրելի նշանա-
կուելով Մակար Արքեպիսկոպոս, ժողովը փակուեց ճաշից յետոյ
ժամը 1 անցած, որ սկսուած էր առաւօտեանժամը 9-ին:

Հետեւ օրը ամսոյս 21-ին առաւօտը նոյն հանդերձանքով պատգամաւորները ի ձայն զանգահարութեան Վեհարանից եկան եկեղեցի՝ ժողովուրդը՝ որ աւելի ևս բազմաթիւ էր, սրտատրոփ սպասում էր Ժողովի հետեանքին:

Ժողովը բացեց Ամենապատիւ Տեղակալ Հայրը մաղթանքով։ Ժողովականների թիւը 30 էր, սկսուեց չորս ընտրելիների ցուցակի վերայ քուէարկութիւն ընտրելիի թղթի վերայ գրելով «ընտրեմ» կամ «ոչ ընտրեմ»։ Եւ ահա այսպէս՝

Ա. Խրիմեան Մկրտիչ Արքեպիսկոպոս ստացաւ 13 ձայն ընդդէմ 17-ի.

Բ. Զմիւռնիոյ Արքեպիսկոպոս Մելքիսեդէկ Մուրատեան ստացաւ 30 ձայն (միաձայնութեամբ).

Գ. Խորէն Նալիսկոպոս Աշրգեւան 3 ձայն ընդդէմ 27-ի.

Դ. Մակար Արքեպիսկոպոս 16 ձայն ընդդէմ 14-ի.

Քուէարկութիւնից յետոյ Զմիւռնիոյ Արքեպիսկոպոս Մելքիսեդէկ միաձայն ընտրութեամբ 30 ձայնով համարուեց Առաջին Ընժընթագման ի կամուղիկոսութիւն, իսկ նոր Նախիջեանի ու Բեսարաբիոյ Արքեպիսկոպոս ՄԱԿԱՐ 16 ձայնով ընդդէմ 14-ի երկրորդ:

Խորէն կազմուեց և ստորագրուեց Հետեւեալ օրագիրը՝ որով ժողովը առաջարկումէ Սինօդին անել իրան վերասպահեալ անօրէնութիւնը:

**«Ե 21 Կարիլի 1885 ամիւ. Ճողովն Արքազան Արք-
Եպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց, Շարծրապատիւ-
Վարդապետաց և ականաւոր աշխարհական պատ-
գամաւորաց, Եկեղոց ի վիճակացն Որուսաստանի,
Պարսկաստանի և Հնդկաստանի, գումարեալն ի
Տաճարի Վանիցն Արքոյ Խճմիածնի վասն ընտրու-
թեան Ծայրագոյն Պատրիարք Կամուղիկոսի ա-
մենայն Հայոց՝ բացեալ ի 20 Կարիլի զԱմենակա-
լութիւն իւր առ ի գործ ընտրութեան Կամուղիկո-
սի ամենայն Հայոց կանոնաւորեալն կարգաւ, հա-
մաձայն առաջադրութեան Տեառն Կառավարչապե-
տի քաղաքական մասին Կովկասու ի ^{ՅԱ Սարտի} _{6 ապրիլի} տար-
ւոյս № 3343, ի ներկայութեան Ենդամոյ խորհր-
դարանի Կորին Պայծառափայլութեան, Տայնի Աօ-
վետնիկ—Պլրիբիլի՝ ներկայացուցչի Շարծրագոյն Իշ-
խանութեան, ուր ընթերցեալ զանուանս ականա-
ւոր Արք-Եպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց գտե-
լոց ի սահմանս Որուսիոյ, Թուրքիոյ և Պարսկաս-
տանի, յետ պատշաճականն սմին իրի ատենախօ-**

սութեանց՝ կայացաւ ընտրութիւն չորեց ընտրելեաց (կանդիտատաց) յաստիճան կաթուղիկոսութեան աղգիս, որք են 1.) Ամենապատիւ Տէր Մկրտիչ Արք-Եպիսկոպոս Խրիմեան, 2.) Գերապատիւ Տ. Առելքեսեղէկ Եպիսկոպոս Մուրատեանց, 3.) Գերապատիւ Տ. Խորէն Եպիսկոպոս Վշրքեան և 4.) Գերապատիւ Տ. Մակար Արք-Եպիսկոպոս. և վասն այսորիկ կազմեցաւ առանձին ընտրողական թերթ ընդ ստորագրութեամբ Անդամոց Ճողովոյն: Խոկ յայսմ աւուր, յետ բացման Երկրորդ Ճողովոյն՝ առաջարկեցան ցուցակք վերոյիշեալ չորեցունց կանդիտատաց, և ըստ համաձայնութեան Ճողովոյն արժանի եղեն կոչման աւագագոյն ընտրելեաց (կանդիտատաց) երկուքն ի նոցանէ, այն է նախ՝ Գերապատիւ Առելքիսեղէկ Եպիսկոպոսն Մուրատեանց — միաձայն, և Գերապատիւ Մակար Արք Եպիսկոպոսն 16 ձայնիւ հանդէպ 14 ձայնի տուելոց յօգուտ նոցա: Վասնորոյ և Ճողովն Հոգեորական և աշխարհական պատգամաւորաց — Սահմանէաց, Օսոյն ընտրութենէ երկուց կանդիտատաց յաստիճան Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց անցուցանել յօրագիր, և վաւերացուցեալ զայն ընդ ստորագրութեամբ համայն Անդամոց Ճողովոյն՝ յանձնել ի Աինօդն Արքոյ Եղմիածնի վասն առնելոյ զկախեալն յինքենէ զպատշաճականն տնօրէնութիւն, համաձայն սահմանեալ առ այս օրինադրեալ կարգին:

Այս գործողութիւնները կատարելուց յետոյ Ամենապատիւ Տեղակալ Արքազանը յայտնեց Ժողովին իւր գոհունակութիւնը յաջող հետեւանքի համար, խոկ կառավարութեան ներկայացուցիչ Տայնի Սովետնիկ Պրիբիլ Հնորհաւորեց յաջող ընտրութիւնն և այսպէս Ժողովը վերջացաւ:

Քացուեցին Տաճարի դռները. եկեղեցու շուրջը խոնուած քազմութիւնը շրջապատեց եկեղեցու գաւիթը և ձնշող անձկութեամբ սպասումէր լսել ընտրեալի անունը. Թերթիկների վերոյ գրուած քուէարկելեաց ցանկը ստացած քուէներով ժողովրդից ոմանք ստացան պատգամաւորներից և հնչուեց միաձայն ընտրուած Մելքիսեդէկի անունը. ամբողջ ժողովուրդը իրեւ մի մարդ միաձայն սկսեց կեցցէ աղաղակել, և գլխարկները վեր բարձրացրած աւետում էին մկնեանց ցանկալի անձի ընտրութիւնը. կեցցէների հոսանքի միջից պատգամաւորները գնացին դէպ ի ԱԵՀարան, իսկ ժողովուրդը անսահման ուրախութեամբ հրճվումէր:

Ամբողջ գիշերը Վաղարշապատում ժողովրդական ինֆոյք էր տեղական նուագածութեամբ, և ամենայն տեղ հոծ էր ՄԵԼՔԻՍԵԴԻԿ անուամբ, Ով է ՄԵԼՔԻՍԵԴԻԿ, որի անունը ահա երկու ամբողջ տարի խօսվումէ որպէս արժանի ոք կաթուղիկոսութեան: ՄԵԼՔԻՍԵԴԻԿ իւր ստացած կրթութեամբ, իւր վարած պաշտօններով և իւր գրական վաստակներով էր արժանաւորներից արժանաւորագոյնը:

Նորին Սրբազնութիւնը իւր կրթութեամբ և ծագմամբ մեզ հայրենակից է և լաւ է ճանաչում մեր երկիրն ու ժողովուրդը. Նա երկար ժամանակ Տաճկաստանում՝ լինելով և վարելով զանազան պաշտօններ, ճանաչումէ տաճկահայոց. Նա Երուսաղէմի Ա. Յակովբեանց վանքում՝ ընդունելով կուսակրօնութեան կոչումն և բաւական ժամանակ այնտեղ կենալով ճանաչումէ և գիտէ վանական կարգ ու կանոնները. ահա բարեմասնութիւններ, որ ամեն մարդու ձիրք և բաժին չեն:

Ժողովը վերջանալուց յետոյ ամսոյս 21-ին երեկոյեան 5 ժամին կառավարութեան ներկայացուցիչ Նորին Գերազանցութիւն Տայնի Սովետնիկ (գաղտնի խորհրդական) Պրիբիլ թողեց Մայր Աթոռում՝ իւր վարմունքով ընդհանուր համակրանք և յարգանք յիշատակ թողնելով Միաբանութեանս մէջ:

Ամսոյս 22-ին աշխարհական պատգամաւորները հետեւալ ուղերձը ներկայացնելով Ամենապատիւ Տեղակալ Հօրը, Նորին Սրբազնութեան օրհնութիւնը առնելով յուղի ընկան զնալ իրանց տեղերը:

Ամենապատիւ Սրբազն Տէր Մկրտիչ Արքեպիսկոպոս Տեղակալ
Առենապետի Սիւնչոգոսի Սրբոյ Էջմիածնի և Նախագահ Համագ-
դային Կաթոլիկոսական Ընտրողական Ժողովոյ:

• և առ հաղորդական դժվարացնելիք և ուժիության շրջմի սմախ
-ուշ դրամեցը ցըւզի տերէցան ՏԵՐՑԿՈՆ ՏԵՐ,

Ընտրութեամբ արժանաւոր ժառանգի Աթոռոյ Հայրապետութեան Ազգիս զպաշտօն պատգամաւորութեան մերոյ յաւարտ հանեալ՝ գամք ընդ ողջոյնս հրաժեշտի մերոյ և ընդ հայցուածս հայրական օրհնութեան Զերոյ հաւասարել Ամենապատիւ Սրբազն ծեառնդ զշնորհակալութիւնս մեր սրոտագին վասն խոհական զեկակարութեան, որով առաջնորդեցիք Համազգային ժողովայն ի բարեյաջող եւլու ըստ կրկնակի յուսոյ և բաղձանաց, որոց նուիրական է աւանդ հայրենատուր ի պաշտպանութիւն միութեան ընդ եղբարս մեր բնակեալս ի Տաճկատան և յասկահովութիւն խաղաղութեան, որուամ ողբառուայր բեկութե Յըրիաթութ. մանաւանդ թէ ի պաշտպանութիւն իրաւաութեան Հայրապետի ամենայն Հայոց յայնականի խնդիր՝ որք դարուց ի դարս նուիրագործեալ կանոնական իրաւամբ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, սեպհական են միայն իւրում Մայրագոյն Բարձր Խշիանութեան և գրաւական բարոյական յաւագաղիմութեան ապագայ սերնդոց Ազգիս՝ հաւատարիմ հպատակութեամբն և սիրովն առ Մայրն իւր գորովաշի առ Եկեղեցին Հայաստանեայց, տան մեզ գեղեցիկ ապացոյց վստահութեան թէ՝ արդարն ըուռն ենի Զեղ իղձք բաղմագիմի բարեմասնութեան, զոր ապացուցիք գործովք իրրե հաւատարիմ և հարազատ պաշտօնեայ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ:

Յուսալ յաւսամբ համարձակօրէն Գերզգօն Տէր, զի բարեձիր խաչականութեամբ և հաստատմանութեամբ Զերով այսուհետեւ ևս զղեկ վարչութեան գործոց Մեծի Սրբոյ Աթուլոյս մերոյ պահպանեալ անսասան, հասուցանելոց էք ընտրեալ Հայրապեսի մերոյ, առաւել ևս երախտագիտութեան պարտաւորս առնելով որպէս զմիղ նոյն և զժողովուրդն համօրէն, որոց ամենեցուն փա-

փագ մենք է տեսանել զԱթոռն Սուրբ կայիչ Հապէս պայծառացեալ
ի ցնծա թիւն սրտից հարազատ զաւակոց իւրոց։

Ե 22 Ապրիլի 1885 ամի
Ե Ա. Էջմիածին.

Պատգամաւորք Համազգային ընտ-
րողական ժողովոյն.

Իսահակ Մանուկեան Ալաջալիանց.
Ներսէս Ասլանեան Աթարեկեանց.
Ելէքսանդր Լալայեանց.
Ելէքսանդր Դաղագեանց.
Սիմեոն Աթանասեան.
Արգար Յովհաննիսեան.
Համբարձում Առաքելեանց.
Յովհաննէս Սարգսեանց.

Ընտրութիւնից յետոյ Ամենապատիւ Տեղակալ Հայրը ի կողմանէ Հօգեռորականաց Մայր Աթոռոյս շնորհաւորական հեռազիր ուղարկեց առ Տէր ՄԵԼՔԻՍԵԴԵԿ շնորհաւորելով Նորին Սրբազնութեան ընտրութիւնը. մի հեռազիր ևս ուղղեց դէպ ի Կ. Պօլսոյ Պատրիարքարանը՝ յայտնելով Կաթողիկոսաւկան ընտրողական Համազգային Ֆողովի հետեանքը. ահա Ամենապատիւ Տեղակալ Հօր Հեռադրների և նոցա պատասխանեաց պատճեններու.

ՀԵՂՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԱԿԱՆ ՏԻՒԴՈՒՅՆ ՀՕՐ

トヌリトトモルト

ԱՐԵՆԱԳՈՒՏԻՒՆ

«ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՒ

«Համազգային Գերագոյն ծողովն միաձայնութեամբ ընտրելով այսօր զՁեզ ի Գահ Հայրապետութեան, փութայ շնորհաւորել զցանկալի ընտրութիւն Զեր, փափագելով տեսանել զՁեզ այսօր ի զիրկ Մօրս Լուսոյ Կաթուողիկէ Էջմիածնի:

“Նախագահ Ժողովյան և Տեղապահ

• ԱԿՐՏԵԶ ԱՐ-ՖԵՊԻՍԿՈՎՈՒ

• Ե Կ. ՊՈԼԻՍ

• ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

« Համազգային ժողովն էջմիածնի միաձայնութեամբ ընտրեաց ի Գահ Հայրապետութեան զՏէք ՄԵԼՔԻՍԵԴԻԿ ԱՐՔԵՊՈԽՈՎՈՍՆ Զմիւռնիոյ, փութամ ծանուցանել Ազգային ժողովոյդ զյաջող ընտրութենէս;

« Նախագահ ժողովոյն և Տեղապահ
ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊՈԽՈՎՈՍ .

ՊԱՏՐԻԱՐՔԱՆԻ .

« Ամենապասիւ Մկրտիչ Արքեպիսկոպոս Նախագահ Համազգային ժողովոյ և Տեղապահ. յէջմիածնի :

« Ընդունեցէք սրտագին շնորհակալութիւնս՝ Զեր շնորհաւորութեանց և Համազգային ժողովի վատահութեան ու Համարման Համար . ;

« ՄԵԼՔԻՍԵԴԻԿ .

Ընտրական գործերը վերջանալուց յետոյ Սինօդը օրագրութեամբ ըստ արամազրութեան օրինաց՝ ժողովի օրագրութիւնը և ընտրական թերթերը յանձնեց Նամախոյ թեմի կառավարիչ Գեր. Թագէոս Եպիսկոպոս Զիւնականին Տփիսիսի պատգամաւոր Մեծ. Պ. Արգար Յովհաննիսեանի և Նարարազի պատգամաւոր Ներսէս Աթարէզեանի հետ ներկայացնել գլխաւոր Կառավարութեան Հասուցանել ուր Հարելն է ի պատշաճաւոր տնօրէնութիւն :

Հայ ազգը գարերից ի վեր արժանացած լինելով Ռուսիոյ քարեինամ Կառավարութեան և Ամենողորմած Կայսրների շնորհացն ու գթութեանը՝ այժմ ևս նոյն գթութեան առհաւատչեայն վայելելու աներկմիտ ենք; Աներկմիտ ենք որ Ամենողորմած Կայսրն ամենայն Ռուսաց — ԱԼԵՔՍԱՆԴՐ Գ. Հաստատելով Համազգային ժողովոյ միաձայնութեամբ ընտրուած Կաթուղիկոսացուն, ի բաց պարութեալ կը տեսնենք Հայրապետական Աթոռոյ ու քողը և հրճուանօք կը գոչենք. « Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, յորս խոնարհ արտրեր զմեզ, և ամացն՝ յորս տեսաք զչարչարանս » :